

## ՄԻ «ՊԱՏՄԱԿԱՆ» ՓԱՍՏԱԹՂԹԻ ՄԱՍԻՆ

Ա. Յ. ԱՄԻՐՅԱՆ

Հայկումկուսի պաշտոնական տեղեկագիր «Известия ЦК КПА»-ի 1922 թ. հունվարի 25-ի անդրամիկ համարում Հայկումկուսի կենտկոմի քարտուղար և ՀԽՍՀ ներքին գործերի ժողովրդական կոմիսար Ավիս Նուրիջանյանի կողմից հրապարակվեց մի փաստաթուղթ՝ 1920 թ. հունվարի 18-19-ին Երևանում կայացած Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների ընդհատակյա առաջին կոնֆերանսի բանաձևը, որին պատմական դառնալու ճակատագիր էր վերապահված:

Իրոք, բանաձևի հրապարակումից ի վեր՝ ութ տասնամյակ շարունակ, նրա հիմնական դրույթները ամենատարբեր դիրքերից մեկնաբանվում ու մանրամասնվում են Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման թեման արծարծող՝ Հայաստանում ու Սփյուռքում լույս ընծայվող անհատիկ բոլոր քիչ թե շատ լրջմիտ պատմական ուսումնասիրություններում ու հեղինակավոր հրատարակություններում: Այլ կերպ չէր կարող լինել, եթե մկատի առնենք փաստաթղթի բովանդակությունը:

Ըստ խորհրդային պատմագրության՝ այնտեղ «ճշտ գնահատական էր տրվել քաղաքական մոմենտին, բացահայտվել էր Անդրկովկասի բուրժուա-մացիոնալիստական պարտիաների ներքին ու արտաքին հակառևոլյուցիոն ուժերի վարած քաղաքականության նեակցիոն էությունը և հակաժողովրդական բնույթը»: Հատկապես ընդգծվում էր «Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության համաշխարհային պատմական դերը, կարմիր բանակի տարած հաղթանակների միջազգային նշանակությունը»: Եվ ամենազխալորը՝ «Հայ ժողովրդի համար ստեղծված ծանր դրությունից դուրս գալու ելքը տեսնվում էր զինված ապստամբության միջոցով իշխանությունը գրավելու մեջ»<sup>1</sup>:

Պատմաբանների ուշադրությունն առաջսր էլ ամենից առաջ բնեւում է փաստաթղթի առանցքը կազմող հենց այս դրույթի վրա, որը, որպես կանոն, մեջ է բերվում թեման լուսաբանող բոլոր աշխատություններում. «Քաղաքացիական պատերազմը Հայաստանում տիրող կարգերի դեմ (ինչպես և Վրաստանում ու Ադրբեջանում) և այդ դասակարգերի կազմակերպած «դաշնակցական» կառավարության դեմ, դաշնակների իշխանության բռնի ընդլուծումը տապալումը Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների առաջնահերթ խնդիրն է:

Միայն այդ ուղիով մենք կկարողանանք դնել սովետական իշխանության ամուր հիմքը, միայն այդ ուղիով հնարավոր է մասսաներին փրկել կործանումից»<sup>2</sup>:

Բանաձևի հրապարակումից կարճ ժամանակ անց՝ 1922-ի սեպտեմբերին, այդ փաստաթղթի օրինականությունն ու վավերականությունը հերքվեց Հայհեղկոմի առաջին նախագահ Սարգիս Կասյանի կողմից, որին մինչ այդ՝ 1921-ի ապրիլին, Կոմիստերնի 3-րդ համաժողովին մասնակցելու պատեհ առիթով հեռացրել էին Հայաստանից, որպեսզի այնուհետև աշխատանքի նշանակեն Թիֆլիսում,

<sup>1</sup> «Հայաստանի կոմունիստական պարտիայի պատմության ուրվագծեր», Եր., 1963, էջ 280-281:

<sup>2</sup> «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ընդլուծումը և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում, փաստաթղթերի և նյութերի ժողովածու», Եր., 1959, էջ 303-304:

սկզբում՝ որպես «Կարմիր աստղ» թերթի խմբագիր, ապա՝ ՀԿ(բ)Կ կենտրոնի Նախագահության 1922 թ. ապրիլի 8-ի որոշմամբ այստեղ հիմնվելիք «անկուսակցական ամսագրի պատասխանատու խմբագիր»<sup>3</sup>:

Այդ պարբերականը, որ շուտով կյանքի կոչվեց Կասյանի ծավալած եռանդուն գործունեության շնորհիվ, «հասարակական-քաղաքական-տնտեսական և գիտական «Նոր աշխարհ» հանդեսն էր:

Կասյանին Հայաստանից հեռու պահելու հիմնական շարժառիթը Խորհրդային Հայաստանի իշխանություններում առաջացած ներքաղաքական սուր ճգնաժամի՝ Սարգիս Կասյանի և Ավիս Նուրիջանյանի գլխավորած երկու թևերի հակամարտությունն էր:

Թևերից առաջինը Հայաստանում տարվող ներքին քաղաքականությունում մեղմ մեթոդների, իրադրությունից բխող համարժեք գործողությունների կիրառման կողմնակից էր, երկրորդը՝ Ռուսաստանի օրինակով, բռնի մեթոդների (ռազմական կոմունիզմ):

Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց ի վեր սկսված և հետըզհետե թեժացող այդ հակամարտությունը Հայաստանից Կասյանի հեռացմամբ չմարեց, այն շարունակվեց հետակա կարգով ու նոր ձևերով: Դեպքերի հետագա ընթացքը այդ մասին է վկայում:

Նորաստեղծ հանդեսի էջերում մարքսիզմի տեսաբանն ու հրապարակախոսը սկսեց հրապարակել արդիական հնչելություն ունեցող իր գաղափարա-քաղաքական, պատմագիտական ուսումնասիրությունները: «Հայաստանի տնտեսական-դասակարգային ստորուրարան» վերնագրով հոդվածը «Նոր աշխարհ»-ի անդրաճիկ համարում<sup>4</sup> լույս ընծայելուց հետո Կասյանը ձեռնամուխ եղավ «Ձախտության հիվանդությունը մեզանում» խորագրով հոդվածաշարի հրապարակմանը: Ծրագրված շարքի առաջին հոդվածը լույս տեսավ ամսագրի երկրորդ համարում, որի վերաբերյալ խմբագրության ծանոթագրությունում նշված էր. «Սույն հոդվածաշարը տպագրվում է դիսկուսիոն կարգով»<sup>5</sup>: Չնայած դրան՝ հոդվածաշարը շարունակություն չունեցավ: Այն կասեցվեց Հայկոմկուսի կենտրոնի Նախագահության՝ «Կասյանի հոդվածի մասին «Նոր աշխարհ» ամսագրի N 2-ում» 1922 թ. հոկտեմբերի 10-ի կորուկ որոշմամբ<sup>6</sup>:

Սույն փաստաթղթի հետ թոուցիկ ծանոթությունն անգամ երևան է հանում որոշման հակակասյանական ուղղվածությունը: Նրա առաջին երկու կետում մասնավորապես ասված էր.

«1. Հեռախոսագրով առաջարկել «Նոր աշխարհ»-ի խմբագրությանը դադարեցնելու ընկ. Կասյանի հոդվածի խոստացված շարունակության տպագրումը և այն չանել առանց ՀԿԿ կենտրոնի թույլտվության:

2. Առաջարկել ընկ. Կասյանին իսկույն մեկնել Էրիվան այդ հոդվածի վերաբերյալ բացատրություններ տալու համար:

Ակնհայտ կողմնակալությամբ աչքի էր ընկնում մանավանդ որոշման երրորդ կետը.

«3. Ի նկատի ունենալով ընկ. Ավիսի հայտարարությունը այն մասին, որ բանաձևը ընդունվել է ընդհատակյա կոնֆերանսի կողմից, ընկ. Կասյանին պատասխանատվության ենթարկել կուսակցությանն ու նրա առանձին անդամներին վարկաբեկելու համար»:

Ստացվում էր այնպես, որ առանց խորամուխ լինելու խնդրի էության մեջ, առանց ստուգելու կուսակցության երևելի գործիչներից մեկի կողմից ներկայացված փաստագրված մեղադրանքի ճշտությունը, Ավիսի հայտարարությունը

<sup>3</sup> ՀՔՊԱ, ֆ. 1, ց. 2, գ. 5, թ. 16:

<sup>4</sup> Տե՛ս «Նոր Աշխարհ», 1922, № 1, էջ 8-21:

<sup>5</sup> Նույն տեղում, № 2, էջ 3-18:

<sup>6</sup> ՀՔՊԱ, ֆ. 1, ց. 2, գ. 5, թ. 78:

կանխակալ ընդունվում էր որպես հաստատագրված իսկություն, և այդ հիմքով Կասյանը ճանաչվում էր մեղավոր և դատապարտման արժանի: Եվ դա այն պարագայում, երբ ՀԿ(Խ)Կ կենտկոմի Նախագահության անդամներից երկուսը՝ Սերգեյ Մարտիկյանն ու Ալեքսանդր Ծախվերդովը (Ծախվերդյան), որոնք ընդհատակյա կոնֆերանսի մասնակիցներից էին, իսկ վերջինս նախագահել էր այն, ի հակառակ Ավիսի հայտարարության, վկայում էին, որ հունվարյան կոնֆերանսը նշված բանաձևը չէր ընդունել<sup>7</sup>:

Որոշման մեջ այնուհետև ասվում էր. «4. Արձանագրել, որ նախագահության անդամ անդամներից ոչ մեկը, ոչ ուղղակի և ոչ անուղղակի, չէր իմացել այդ հողվածի մասին»: Այստեղից հետևում էր, որ եթե որևէ մեկն իմանար հողվածի մասին նախապես, ապա ամեն ինչ կարվեր նրա տպագրումն արգելելու համար:

Եվ միայն վերջին կետն էր, որ որոշ չափով մեղմում էր նախընթաց շարադրանքը. «5. Հարցի վերաբերյալ գրավոր բացատրություն պահանջել ընկ. ընկ. Ավիսից և Կասյանից»:

Ի՞նչն էր առաջացրել Հայկոմկուսի ղեկավարության մեծ անհանգստությունն ու վրդովմունքը: Հիմնական, բուն պատճառը, անտարակույս, Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների 1920 թ. հունվարյան կոնֆերանսին վերագրվող բանաձևի օրինականության (վավերականության) հերքումն էր Կասյանի կողմից: Բայց կային և այլ, ոչ պակաս կարևոր պատճառներ՝ նախախորհրդային և Խորհրդային Հայաստանում տիրող սոցիալ-տնտեսական և քաղաքական իրավիճակի վերաբերյալ Կասյանի հայացքներն ու, մանավանդ, Հայկոմկուսի ղեկավարության անցյալ ու ներկա քաղաքականության նրա վտանգավոր բացահայտումները:

Ստեղծված բարդ հանգույցի ուսումնասիրությունն ու վերլուծությունը բերում է այն անխախտ համոզմանը, որ գաղափարաքաղաքական հողի վրա ծավալվող պայքարի ընթացքում լուծվում էին նաև ներանձնական խնդիրներ:

Ճեռնամուխ լինելով իր հողվածաշարին՝ Կասյանը չէր կարող չհասկանալ, թե ինչպիսի արձագանք կգտնի այն Հայաստանում, և հայ ղեկավար կուսակցական որոշ գործիչների գաղափարատեսական, մեթոդոլոգիական ու գործնական քաղաքականության սնանկ ու վնասակար լինելու վերաբերյալ իր մտքերը հիմնավորում և համեմտում էր Մարքսի և Լենինի ասույթներով: «Известия»-ում բանաձևը տպագրվելուց անմիջապես հետո, երբ Կասյանը որոշում է նորեն հրատարակայնորեն բացահայտել Ավիսի կեղծիքի բուն էությունը, իր մտադրությունների մասին նախապես հայտնում է Մյասնիկյանին ու Լուկաշինին<sup>8</sup>: Իսկ հողվածաշարը տպագրելուց առաջ իրեն հնարավորինս ապահովագրելու նպատակով նա այն քննարկման է դնում ամսագրի խմբագրական կոլեգիայի ընդլայնված նիստում: Քննարկմանը, որը կայանում է 1923 թ. սեպտեմբերի 8-ին, հրավիրվում են նաև գործի բերումով Թիֆլիսում գտնվող Խորհրդային Հայաստանի բարձրատիճան մի շարք գործիչներ, որոնց թվում՝ Ա. Մուսվյանը, Դ. Ծախվերդյանը, Ս. Խանոյանը և ուրիշներ: Նիստի պահպանված արձանագրության պատճենից պարզ է դառնում, որ Կասյանի հողվածաշարը կարդացել էին նաև Ալ. Մյասնիկյանը, Ա. Բեկզադյանը և Ա. Մելիքյանը, որոնք այդ պահին նույնպես գտնվում էին Թիֆլիսում, բայց հրաժարվել էին մասնակցել քննարկմանը: Արձանագրությունում այդպես էլ ասված է. «Հրաժարվածներից բացակայում էին ընկերներ Միասնիկեանը, Մելիքեանը և Բեկզադեանը»<sup>9</sup>:

<sup>7</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>8</sup> Տե՛ս ՀԲՊԱ, ֆ. 1, ց. 2, գ. 54, թ. 2-ի հակառակը:

<sup>9</sup> Նույն տեղում:

Ալ. Մյասնիկյանը թեև բացակայում էր, բայց Ա. Խումարյանի<sup>10</sup> միջոցով հայտնել էր, որ ինքը մնում է նույն կարծիքին՝ նկատի ունենալով այն, որ մինչ այդ, ծանոթանալով հողվածի շարվածքին, նա դեմ էր արտահայտվել այն հանդեսում գետնադրու մտքին: «Բնակութեան առնելով ընկ. Միասնիկեանի կարծիքը առ այն, թե աննպատակահարմար է վերոհիշեալ հողվածի տպագրութիւնը, - Աշված է արձանագրությունում, - խորհրդակցութիւնը մտքերի փոխանակութիւնից հետո արգելք չգտավ լույս ընծայելու այդ հողվածը»<sup>11</sup>:

Կասյանը բացատրում էր Մյասնիկյանի բացասական դիրքորոշումը հետևյալ կերպ. «Մյասնիկյանը դեմ էր այդ հողվածի և նրա շարունակության տպագրմանը «երիտասարդների» դեմ հանդես գալու անհարմարության նկատառումով»: Իսկ Կասյանի համոզմամբ «հողվածը ոչ միայն չի կարող վնասել կուսակցությանը, այլ, ընդհակառակը, օգտակար կլինի, առողջացնելով այն»<sup>12</sup>: Իրոք, հողվածում չկային կուսակցությանը վարկաբեկող գաղափարներ, բայց կար կուսակցությանը ոչ այն ճանապարհով տանող ղեկավար գործիչների դեմ ուղղված սուր և անխնայ քննադատություն:

Հողվածում Աշելով, որ յուրաքանչյուր գիտակից ու մտածող քաղաքական գործիչ ներքին մղումը պետք է լինի «անցյալ վարքագծի վերլուծությունից քաղել ներկա վարքագծի ըմբռնումը», Կասյանը անհրաժեշտ էր համարում «հրապարակի վրա դնել և մանրակրկիտ վերլուծության ենթարկել» կուսակցության անցյալ գործունեությունը: Նա համոզված էր, որ չպետք է քաշվել իրենց սխալները հրապարակորեն մատնանշելուց, իրենց տարածայնությունները հրապարակ հանելուց, վատ արարքները դատափետելուց, վնասակար գործերը, սեփական ապիկարությունը անխնայ մտրակելուց: «Թող լայն զանգվածներն իմանան, որ մենք իբրև հեղափոխականներ գիտենք մեր իսկ սևին համարձակ ու անվախ սև ասել, իսկ սպիտակին՝ սպիտակ»<sup>13</sup>:

Այսպիսի անխապատրաստությունից հետո Կասյանը կուսակիցների ուշադրությունը բևեռում էր, իր կարծիքով, կարևոր մի շարք, և, պետք է ասել, կարևոր նաև՝ հայ բոլշևիկների գործունեության ուսումնասիրության և պատմական գնահատականի տեսակետից, հարցերի վրա: Այդ հարցերը գլխավորապես կապված էին կուսակցության կայացման համար կարևորագույն երկու իրադարձությունների՝ Կասյանի ղեկավար մասնակցությամբ տեղի ունեցած Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների ներկայացուցիչների 1919 թ. սեպտեմբերյան խորհրդակցության և, առանձնապես, Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների 1920 թ. հունվարյան ընդհատակյա կոնֆերանսի ընդունած որոշումների հետ:

Անդրադառնալով 1919-ի սեպտեմբերյան խորհրդակցությանը՝ Կասյանը գրում էր. «Խորհրդակցությունը չէր լինի մարքսիստական, եթե նա նկատի չառներ երկրի *իրական* պայմանները, *տնտեսական-դասակարգային* ստրուկտուրան, «ազգային ուրույնը», միջազգային դրությունը»<sup>14</sup>:

Հեղափոխական խնդիրներին և մանավանդ իշխանությունը վերցնելու կարևորագույն հարցին Կասյանը մոտենում էր իրատեսորեն. «Հեղափոխական անհամբերությունը և անհատական կամ խմբակային ցանկությունը չեն, որ պայմանավորելու են հեղափոխական ակցիան, այլ զանգվածի օրյեկտիվ կացությանը թելադրված գիտակցությունն ու կամքը»:

<sup>10</sup> 1921-ից ՌԽՖՍՀ ԲԳՏ-ի լիազոր և կուսակցական վերահսկողության հանձնաժողովի անդամ կովկասյան բանակում:

<sup>11</sup> ՀԲՊԱ, ֆ. 1, ց. 2, գ. 54, թ. 1:

<sup>12</sup> Նույն տեղում, թ. 3:

<sup>13</sup> «Նոր աշխարհ», 1922, № 2, էջ 4:

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 7:

Պատմության համար հատկապես կարևորվում են Կասյանի հողվածի այն է-  
ջերը, որոնք վերաբերում են Հայաստանի կոմունիստական կազմակերպություն-  
ների 1920 թ. հունվարյան կոնֆերանսին ու նրա ընդունած թեզիսներին: Եթե հաշ-  
վի առնենք, որ չեն պահպանվել ոչ կոնֆերանսի արձանագրությունները և ոչ նրա  
ընդունած թեզիսները, ապա կոնֆերանսի մասնակիցների և ամենից առաջ Կաս-  
յանի, որն անկասկած այդ թեզիսների հիմնական հեղինակն է եղել, վկայություն-  
ները ձեռք են բերում պատմական սկզբնաղբյուրի նշանակություն:

Ըստ Կասյանի՝ կոնֆերանսում մշակվել էր ստեղծված պայմաններում միակ  
ճիշտ քաղաքական վարքագիծը: Համաձայն դրա՝ «կուսակցությունն ունենալով  
ոչ ավելի քան 500 անդամ, պետք է զբաղվեր իր կազմակերպությունների ազդե-  
ցության տարածմամբ ու խորացմամբ, արհեստակցական և գյուղացիական միու-  
թյունների միջոցով ինքու մասաների քաղաքական դաստիարակմամբ, զար-  
գացնելով նրանց մեջ ինքնագործունեության և ինքնիշխանության ձգտումը: Այդ-  
պիսով պատրաստ լինել իշխանությունը գրավելու»<sup>15</sup>:

Միայն երկու դեպքում էր կոնֆերանսը նպատակահարմար գտնում անպայ-  
մանորեն բարձրացնելու ապստամբության դրոշ. եթե դաշնակ կառավարությունը  
մենջևհիկյան Վրաստանի հետ միասին փորձեր օգնել մուսավաթական կուսակ-  
ցությանը՝ խոչընդոտելու Բաքուն կարմիր բանակի կողմից գրավելուն, և եթե «նա  
Ադրբեջանի կամ Վրաստանի բանվորա-գյուղացիական ապստամբությանը թի-  
կունքից խանգարել ուզենա»<sup>16</sup>:

Այս կապակցությամբ Կասյանին անսահման վրդովել էր Հայկոմկոմի  
կենտկոմի տեղեկագրում հրապարակված բանաձևը, որը ներկայացվել էր որպես  
կոնֆերանսի կողմից ընդունված փաստաթուղթ: Նա վրդովված էր այն բանից,  
որ «մեր կուսակցության մեջ էլ կան մարդիկ, որոնք կուսակցության պատմու-  
թյունն անգամ խեղաթյուրելու ձգտում ունեն»<sup>17</sup>:

Կասյանի արտահայտած այս միտքը հատուկ ուշադրության է արժանի՝  
պատմության խեղաթյուրումը հենց այդ պատմությունն արարողների կողմից ար-  
դեն սկսվել էր խորհրդային իշխանության արշալույսին, որը հետագայում ձեռք  
էր բերելու համատարած բնույթ:

Կասյանը գտնում էր, որ «պետք է դատապարտել այն «ընկերոջ» (չակերտնե-  
րը Կասյանին են – Ս. Ա.) վարմունքը, որը ձախության հիվանդությամբ բռնված  
գիտակցաբար կեղծել է և թյուրիմացության մեջ ձգել "Известия"-ի խմբագրու-  
թյանը», որն էլ իր հերթին «թյուրիմացության մեջ է գցել ամբողջ կուսակցությա-  
նը»<sup>18</sup>: Կասյանը մեղադրում էր «թյուրիմացության» մեղավոր Ավիս Նուրիջանյա-  
նին, որը, կոնֆերանսի ակտիվ մասնակիցներից լինելով, նրա քննարկմանն էր  
ներկայացրել «Ալեքսանդրապոլի կոմիտեի կողմից որպես թե ընդունված մի բա-  
նաձև, որը սակայն չի արժանացել մինչև անգամ քննարկման»<sup>19</sup>: Քննարկման ան-  
գամ չարժանացած այդ բանաձևն էր, որ Ավիսը հրապարակել էր որպես կոնֆե-  
րանսի կողմից ընդունված փաստաթուղթ: Բացի այդ՝ նույն Ավիսը Թիֆլիսում  
ընդհատակյա հրատարակվող «Պահակ» հայերեն թերթում հրապարակել էր նաև  
«Դիմում Անդրկովկասի կոմունիստական կազմակերպություններին և Արևելքի  
ժողովուրդներին» փաստաթուղթը, որը ըստ Կասյանի, նույնպես չէր քննարկվել  
ու չէր ընդունվել կոնֆերանսում:

Անդրադառնալով ավիսյան բանաձևին՝ Կասյանը գրում էր. «Մեր կուսակ-  
ցությունը ... ձախության հիվանդությամբ չէր տառապում, քաղաքական անգրա-

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 9-10:

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 10:

<sup>17</sup> Նույն տեղում:

<sup>18</sup> Նույն տեղում:

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 11:

գիտությամբ ... չէր տանջվում, իրական հողից կտրված, եթերում սավառնող օդապարիկ չէր, որ քննության անոներ, էլ չեն ասում ընդունել մնան բանաձև...»<sup>20</sup>: Եվ որպեսզի ցույց տա, թե որքան «անգրագետ, անտրամաբան», իրականությունից հեռու է կազմված այն «պլատֆորման», որ Ավիսը վերագրել էր կուսակցությանը, նա այդ «պատմական» փաստաթուղթը ենթարկում է մանրագնին վերլուծության ամսագրի՝ սովորականից ընդարձակ 7 էջերում:

Այդ վերլուծությանն անդրադառնալու հարկ չկա այստեղ: Միայն նշենք, որ հետևելով Կասյանի տրամաբանությանն ու մտածելակերպին՝ հարցը սուկ բանաձևի ընդունումն ու չընդունումը չէր: Հարցը, ըստ նրա, բանաձևին ծնունդ տվող մարդկանց գաղափարներն ու գործելակերպն էր, որը միայն անցյալ չէր, այլև ներկա, և որը մեծ ավերածություններ կարող էր կատարել երկրում, եթե դրանց տերերը զբաղեցնում էին իշխանական աթոռներ: Եվ այդ մտահոգությամբ առաջնորդվելով՝ նա իր հողվածն ավարտում էր մի նախադասությամբ, որը չէր կարող մի առանձին տազնապ չհարուցել Հայաստանի ղեկավար կուսակիցների շրջանում. «Զախության հիվանդությամբ, հետևաբար և խակությամբ ու մակերեսային տրամաբանությամբ, պայմանավորված այդ մտածելակերպը, - գրում էր Կասյանը, - ավելի խորացավ մեզանում՝ մայիսին Ալեքսանդրապոլում և Հայաստանի սովետիզացիայի առաջին շրջանում: Մեր այդ ժամանակների գործունեության վերլուծումը կը տանք հաջորդ համարում»<sup>21</sup>:

Պետք է միայն ափսոսալ Կասյանի հողվածաշարի հրապարակումն արգելելու համար: Այլապես պատմաբաններն իրենց ձեռքի տակ կունենային ուշադրության արժանի կասյանական ևս մի վերլուծություն՝ 1920 թ. մայիսի 10-ին Ալեքսանդրապոլում հապշտապ ընտրված «Հայաստանի ռազմա-հեղափոխական կոմիտե»-ի ժամանակավրեպ գործունեության, Հայաստանում խորհրդային կարգեր հաստատելու և խորհրդայնացման առաջին շրջանի իրադարձությունների վերաբերյալ:

ՀԿ(բ)Կ կենտկոմի Նախագահությունը Կասյանի հողվածի վերաբերյալ ընդունած առաջին որոշումից չորս օր անց ստիպված էր մեկ անգամ ևս անդրադառնալ հարցին: Դա միանգամայն հասկանալի էր: Թերաշատ առաջին որոշումը անկասկած չէր կարող համապատասխան դիմադարձության չհանդիպել կուսակցության վերնախավում գտնվող սթափ մտածելու ընդունակ ուժերի և ամենից առաջ հենց Կասյանի կողմից:

ՀԿ(բ)Կ կենտկոմի Նախագահության հոկտեմբերի 14-ի նիստում որոշվեց Կասյանի հողվածի հրապարակման հետ կապված բոլոր հարցերը երևան հանելու համար ստեղծել երեք հոգուց բաղկացած հատուկ հանձնաժողով՝ Սարգիս (Սաքո) Համբարձումյան (ՀԽՍՀ կենտգործկոմի նախագահ), Հայկ Հովսեփյան (ՀԿ(բ)Կ Ալեքսանդրապոլի գավառային կոմիտեի քարտուղար), Դրաստամատ Սիմոնյան (Երևանի քաղխորհրդի նախագահ)<sup>22</sup>:

Հանձնաժողովն աշխատեց երեք և կես ամիս՝ 1922 թ. հոկտեմբերի 15-ից առ 1923 թ. հունվարի 31-ը, ունեցավ 5 նիստ, հարցում կատարեց կոնֆերանսի բոլոր մասնակիցներին, այդ թվում նաև Հայաստանից դուրս գտնվողներին՝ նրանցից վերցնելով գրավոր բացատրություններ ու ցուցմունքներ: Մանրակրկիտ աշխատանք տարվեց մանավանդ Կասյանի հետ: Հանձնաժողովի գործունեությունը վերարտադրող արխիվային գործում պահպանվել են նրա բացատրություններն ու ցուցմունքները բովանդակող երկու փաստաթուղթ: Առաջինը՝ «Առաջին ընդհատակյա կոնֆերանսի գործով ՀԿԿ կենտկոմի հանձնաժողովի 1922 թ. հոկտեմբերի 15-ի նիստի արձանագրությունը»<sup>23</sup>, երկրորդը՝ հանձնաժողովի կողմից կազմված

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 18:

<sup>22</sup> Տե՛ս ՀՔՊԱ, ֆ.1, ց. 2, գ. 5, թ. 80:

<sup>23</sup> Տե՛ս նույն տեղը:

վեց հարց պարունակող հարցաթերթիկը՝ Կասյանի 1922 թ. հոկտեմբերի 16-ի մանրամասն պատասխաններով<sup>24</sup>:

Հանձնաժողովի այն հարցին, թե եղե՞լ են արդյոք հոսանքներ ու տարածայնություններ Հայաստանի կոմունիստական կազմակերպություններում սեպտեմբերյան խորհրդակցությունից մինչև հունվարյան կոնֆերանսը ընկած ժամանակամիջոցում, Կասյանը պատասխանում է, որ ոչ մի տեսակի հոսանքներ չեն եղել, եղել են տարածայնություններ միայն լեզու կազմակերպություններին մասնակցելու հարցում: Իր ցուցմունքներում Կասյանը համառոտակի կրկնում է հողվածում բերած իր փաստարկները և ավելացնում, որ կոնֆերանսի կողմից չընդունված բանաձևի հրապարակման առաջին փաստի մասին ինքը տեղյակ էր դարձել շատ ավելի վաղ՝ հունվարյան կոնֆերանսից կարճ ժամանակ անց, այն բանից հետո, երբ Ավիսը ինքնագլուխ տպագրել էր այն Բաքվում լույս տեսնող «Բակինսկի ուսուցիչ» թերթում: «Ես իմացա չընդունված բանաձևի տպագրման մասին «Բակինսկի ուսուցիչ»-ում հենց Ավիսից, որը վերադառնալով Բաքվից, բացատրեց այն «թյուրիմացության»<sup>25</sup>:

Նույնի մասին, բայց ավելի մանրամասն, հավաստում է նաև Մոսկվանը իր տված գրավոր ցուցմունքներում<sup>26</sup>:

Իսկ թե ինչու այն ժամանակ լռել ու չի արձագանքել Ավիսի հրապարակմանը, Կասյանը բացատրում էր նրանով, որ հենց այդ ժամանակ ինքն ու Մոսկվանը, ինչպես և մի քանի այլ հայ բուլշևիկներ, ձեռքակալվել էին և մեկ ամիս անց արտաքսվել Հայաստանից, այդուհետ ինքը անլեզու ապրել էր Թիֆլիսում, զբաղվել կուսակցական ընթացիկ աշխատանքով և մոռացության տվել բանաձևը: «Այն բանից հետո, երբ բանաձևը երևան եկավ “Известия”-ում, - նշում էր Կասյանը, - ես համոզվեցի, որ դա «թյուրիմացության» արդյունք չէ, այլ գիտակցված հանցագործություն կուսակցության պատմության առաջ»<sup>27</sup>:

Կոնֆերանսի մասնակիցների տված ցուցմունքներից պարզվում է, որ Ավիսը ոչ միայն բանաձևը տպագրել էր «Բակինսկի ուսուցիչ»-ում, այլև հրապարակել էր առանձին բրոշյուրով նույն Բաքվում, իսկ բանաձևի առանձին դրույթները՝ նույնիսկ «Կոմունիստական ինտերնացիոնալ»-ի 19-րդ համարում<sup>28</sup>:

Հայաստանի ազգային արխիվում պահպանվել է բանաձևի մեքենագիր, կարմիր թանաքով արված ուղղումներով, անթվակիր մի օրինակ, որի վերջին էջի հակառակ երեսին՝ վերին դաշտում, Ավիսի ձեռագրով ռուսերեն մակագրված է՝ «Տպագրել բրոշյուրի ձևով»: Այս հանգամանքը, ինչպես օգտագործված գրամեքենայի տառատեսակը, թղթի որակն ու վիճակը, մի շարք այլ հատկանիշներ վկայում են, որ դա բանաձևի հենց այն օրինակն է, որն Ավիսը ներկայացրել էր տպագրման Բաքվում առանձին բրոշյուրով: «Տպագրել բրոշյուրի ձևով» որպես հրահանգ հնչող մակագրությունը, մի ավելորդ անգամ վկայում է Կասյանի իրավացիության մասին, որ բանաձևի տպագրումը «Բակինսկի ուսուցիչ»-ում և ապա առանձին բրոշյուրով թյուրիմացության արդյունք լինել չէր կարող, այլ գիտակցված քայլ էր, իրեն ի ցույց դնելու, իրադարձություններից առաջ ընկնելու գործելակերպ:

Ս. Մարտիկյանի վկայությամբ՝ «բանաձևի հրապարակման մասին «Բակինսկի ուսուցիչ»-ում հայտնի էր դարձել նաև Ստ. Ալավերդյանին, որը զայրացել էր Ավիսի արարքից»: Հանձնաժողովի ձեռք բերած փաստաթղթերի թվում պահպանվել է Ստ. Ալավերդյանի ամսակը՝ գրված, ամենայն հավանականությամբ, 1920 թ.

<sup>24</sup> Տե՛ս նույն տեղը, թ. 3:

<sup>25</sup> Նույն տեղում:

<sup>26</sup> Տե՛ս նույն տեղը, թ. 19:

<sup>27</sup> Նույն տեղում, թ. 3:

<sup>28</sup> Տե՛ս նույն տեղը, թ. 5:

փետրվար-մարտին, որում նա նշում էր. «... Ավիսի անընդմեջ հափշտակության մասին, որը հասնում էր արկածախնդրության», և ավելացնում. «Մենք մկատի ունենք նրա ելույթը Բաքվում, դեռևս 5 ամիս սրանից առաջ, որով ողջ աշխարհին ազդարարում էր Հայաստանում կոմունիզմի լիակատար հաղթանակի և դաշնակցության սնանկության մասին»<sup>29</sup>:

Ավիսի վերջին արկածախնդրությունը բանաձևի հրապարակումն էր Հայկոմկուսի կենտկոմի տեղեկագրում՝ «Известия»-ում: Մեզ հաջողվեց երևան հանել Ավիսի գործելակերպի փաստագրված որոշ մանրամասները՝ կապված նշված հանդեսում բանաձևի հրապարակման հետ:

ՀԿ(Բ)Կ կենտկոմի քարտուղարությունը 1921 թ. դեկտեմբերի 12-ի միտումը ընդունած «Հայաստանի կենտկոմի տեղեկագրի մասին» որոշմամբ<sup>30</sup> անհրաժեշտ էր գտել «Հանձնարարել ընկ. Ավիսին և Ծախուվարովին, Հայաստանի կուսակցության համագումարին ընդառաջ, լույս ընծայել N 1-ը»: Սա նշանակում էր, որ Ավիսը Հայկոմկուսի կենտկոմի առաջիկայում հրապարակվելիք հանդեսի գլխավոր պատասխանատուն էր, ղեկավար-կազմակերպիչը, Ծախուվարյանը՝ անմիջական կատարողը: Ահա այս դերում էլ Ավիսը հանդեսի առաջին համարում հրապարակելու համար ներկայացնում է բանաձևը:

Պահպանվել է Ավիսի ձեռագրով գրված մի փաստաթուղթ, որը, ամենայն հավանականությամբ, բանաձևը հրատարակման ներկայացնելու ուղեկցող նամակի բնագիրն է<sup>31</sup>:

«Известия»-ի համարը հանրապետության կենտրոնական գրադարաններում և Ազգային արխիվում չհայտնաբերելու պատճառով մեզ չհաջողվեց պարզել՝ Ավիսի ձեռագրի տեքստը հրապարակվե՞լ է բանաձևին կից, թե՞ ոչ: Այդ իսկ պատճառով նպատակահարմար ենք գտնում բերել այն ամբողջությամբ:

Նամակը գրված է ռուսերեն, ՀԽՍՀ ներքին գործերի ժողովրդական կոմիսարի՝ փոքր ձևաչափի ձևաթղթի երեք թերթիկի վրա (Ավիսը ներքին գործերի ժողկոմ էր նշանակվել ՀԿ(Բ)Կ կենտկոմի 1921 թ. սեպտեմբերի 26-ի որոշմամբ)<sup>32</sup>: Նամակը թվագրված չէ, բայց ելնելով բովանդակությունից՝ այն պետք է գրված լինի 1922 թ. հունվարի առաջին կեսին: Նրանում ասված էր. «Մեր կուսակցության առաջին համագումարը, որը հրավիրվելու է սույն ամսվա 25-ին, այսպես թե այնպես, պետք է տա Հայաստանում վերջին երկու տարիների ընթացքում տեղի ունեցած իրադարձությունների գնահատականը:

Բանաձևը կօգնի մեր կուսակցական ընկերներից շատերին, հակառակ ամեն կարգի չստուգված քաղքենիական ասեկոսեներին, ճիշտ գնահատել մեր հեղափոխության ռազմական ժամանակաշրջանի իրադարձությունները, այն հաշվով, որ, հակառակ մեր թշնամիների ցանկության, հաստատենք մեր կուսակցության ռազմական ժամանակաշրջանի լիակատար հաջողայնությունը տնտեսական ճակատում նրա ստեղծագործական աշխատանքի ժամանակաշրջանի հետ:

Այս բանաձևն ընդունվել է Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների առաջին ընդհատակյա կոնֆերանսում 1920 թ. մայիսյան ապստամբությունից շատ ավելի առաջ՝ 1919 թ. դեկտեմբերին: Անդրկովկասյան կոմունիստական կազմակերպություններն այն ժամանակ դեռ չէին բաժանվել ըստ երեք հանրապետությունների տերիտորիաների և աշխատում ու հանդես էին գալիս ՌԿԿ-ի դրոշի տակ»:

Ավարտվում է նամակը փաստաթղթի ավիսյան գնահատմամբ. «Այս բանաձևը ունի ոչ միայն պատմական նշանակություն»:

<sup>29</sup> Նույն տեղում, թ. 4-5:

<sup>30</sup> Տե՛ս նույն տեղը, ֆ. 1, ց. 1, գ. 43, թ. 25-ի հակառակը:

<sup>31</sup> Տե՛ս նույն տեղը, ֆ. 1, ց. 2, գ. 54, թ. 22-24:

<sup>32</sup> Տե՛ս նույն տեղը, ֆ. 1, ց. 1, գ. 40, թ. 93:



Փաստաթղթի վերջին՝ երրորդ թերթի հակառակ երեսին դարձյալ ուստերեն Ավիսը մակագրել էր. «Ընկ. Օսհուսվարով: Տեղադրե՞ք որպես բացատրող տողեր բանաձևի ներքևում (առաջին էջում, մանրատառով)»: Եվ որպեսզի ամեն ինչ հասկանալի լինի Օսհուսվարյանին, նույնիսկ մի գծագիր էր պատկերել վերը նշված տողերի տակ, թե ինչպես և էջի որ մասում պետք է տպագրել իր նամակը<sup>33</sup>:

Այնքան ցցուն էր Ավիսի կատարած կեղծիքը, այնքան անբացատրելի նրա վարքը կապյանի հետ սկսված գաղափարաքաղաքական բանակոլի այս ողջ ընթացքում, մանավանդ որ մինչ այդ էլ նա աչքի էր ընկել 1922-ի սկզբներից ծայր առած և հունիս-հուլիսին գազաթնակետին հասած ներքաղաքական խմբակային նոր հակամարտությունում ու նրա գլխավոր հերոսներից էր, որ ՀամԿ(բ)Կ Անդրրերկրկոմը առանց սպասելու հանձնաժողովի աշխատանքների վերջնական ավարտին, 1923 թ. հունվարի վերջերին որոշում է ընդունում այս էլ որերող անգամ իր ծայրահեղությամբ աչքի ընկած Ավիսին ազատել աշխատանքից Հայաստանում և «գործուղել Ռուսաստանի Կոմկուսի կենտկոմի տրամադրության տակ»<sup>34</sup>:

ՀԿ(բ)Կ կենտկոմի Նախագահությունը 1923 թ. հունվարի 30-ին կայացած իր նիստում վերադասի որոշումը ընդունում է «ի գիտություն և ի կատարում»<sup>35</sup>:

Նույն նիստում լսվում է խնդրին վերաբերող ևս երկու հարց՝ կապյանի հողվածի և կապյանի կողմից Ավիսին ներկայացված մեղադրանքի քննությամբ զբաղվող հանձնաժողովի մասին: Դրանց վերաբերյալ ընդունված որոշումներում ասված էր. «Ընկ. Ավիսի գրավոր բացատրությունները կենտկոմի քարտուղարության միջոցով հանձնել հանձնաժողովին» և «Առաջարկել հանձնաժողովին երկօրյա ժամկետում ներկայացնել իր եզրակացությունը»<sup>36</sup>:

Նիստի արձանագրությունում, ի լրումն ընդունված որոշումների, կատարված էր մի լրացուցիչ նշում ևս. «Վերջին կետի վերաբերյալ ընկ. Ավիսը հայտնում է, որ ինքը հանձնաժողովի ընտրությունից հետո եկել է այն եզրակացության, որ նրա ստեղծումը ավելորդ էր, այդ պատճառով իր գրավոր բացատրությունները կհանձնի ոչ թե հանձնաժողովին, այլ կենտկոմին, ինչի կապակցությամբ խնդրում է իր գրավոր բացատրությունները հնչեցնել կենտկոմի նիստում և թույլ տալ դրանք հրապարակելու թերթում»<sup>37</sup>:

Ստեղծված իրավիճակից ելնելով՝ նույն նիստում նույն հարցի մասին ՀԿ(բ)Կ կենտկոմի Նախագահությունը պարտադրված է լինում ընդունել մի նոր որոշում. «Առաջարկել ընկ. Ավիսին Էրիվանից չմեկնել մինչև գրավոր բացատրություններ տալը»<sup>38</sup>:

Երկու օր անց՝ 1923-ի փետրվարի 1-ին, ՀԿ(բ)Կ կենտկոմի Նախագահությունը վերստին անդրադառնում է Ավիսի հարցին<sup>39</sup>: Նիստն սկսվում է «կենտկոմի քարտուղարի հայտարարությամբ առ այն, որ կենտկոմի Նախագահության նախորդ՝ հունվարի 30-ի նիստում, Ավիսի հրապարակած փաստաթղթերն ու ցուցմունքները, առանց կենտկոմի գիտության նա տարել և չի վերադարձրել»:

Ընդունվում է որոշում. «Առաջարկել ընկ. Ավիսին՝ կուսակցական խստագույն դիսցիպլինայի կարգով, մեկ ժամվա ընթացքում, վերադարձնել կենտկոմի Նախագահության նիստում հրապարակված ցուցմունքներն ու փաստաթղթերը, որոնք տարվել են նրա կողմից առանց կենտկոմի գիտության»:

<sup>33</sup> Տե՛ս նույն տեղը, ֆ.1, ց. 1, գ. 40, թ. 93:

<sup>34</sup> Նույն տեղում, ֆ. 1, ց. 3, գ. 7, թ. 3:

<sup>35</sup> Նույն տեղում:

<sup>36</sup> Նույն տեղում:

<sup>37</sup> Նույն տեղում:

<sup>38</sup> Նույն տեղում:

<sup>39</sup> Նույն տեղում, թ.5:

Մեկ ժամվա ընթացքում պահանջվող փաստաթղթերը չեն վերադարձվում: Կենտկոմի Նախագահությունը ստիպված է լինում սպառված օրակարգը լրացնել նա մեկ՝ 6-րդ կետով. «Հսկում է կենտկոմի անդամ Քարամյանի հաղորդումը՝ կենտկոմի Նախագահության հունվարի 30-ի նիստում հրապարակած իր գրավոր ցուցմունքները վերադարձնելուց ընկ. Ավիսի հրաժարվելու և նրա պատրաստակամության մասին՝ տալ բանավոր ցուցմունքներ կենտկոմի Նախագահության հերթական նիստում»:

Հնդունվում է որոշում. «Առաջարկել ընկ. Ավիսին՝ մինչև գրավոր ցուցմունքներ տալը չմեկնել Էրիվանից»<sup>40</sup>:

Ամենայն հավանականությամբ Ավիսը պահանջվող գրավոր ցուցմունքները ոչ փետրվարի 1-ին, ոչ էլ դրանից հետո չի տվել: Այլապես այն կպահպանվեր հանձնաժողովի գործունեությունն արտացոլող արխիվային գործում, և այդ մասին կնշվեր հանձնաժողովի զեկուցագրում: Ընդհատ այնպես, ինչպես պահպանվել է ՀԿ(Բ)Կ կենտկոմի քարտուղարին հասցեագրված Ավիսի՝ 1923 թ. հունվարի 31-ի ցուցմունք հիշեցնող այն նամակը, որի բովանդակած հիմնական ասելիքը մեջբերվում է նաև հանձնաժողովի զեկուցագրում:

*«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻՆ»*

*Մեպտեմբեր ամսին, Թիֆլիսում հրատարակվող «Նոր աշխարհ» հայերեն ամսագրում (N2) լույս է ընծայվել ընկ. Կասյանի հոդվածը բանաձևի հարցի վերաբերյալ:*

*Սույն հարցի մասին կարող եմ հայտնել հետևյալը. «Այդ բանաձևը հանդիսանում է առաջին Հայկական կոնֆերանսի բանաձևը»:*

*Այս հարցի վերաբերյալ ուրիշ ոչինչ հայտնել չեմ կարող:*

*Ավիս 31/1-23թ.»<sup>41</sup>:*

Ավիսի վարքն ու գործելակերպը հանձնաժողովի փաստաթղթերում ներկայացված է բացառապես բացասական նիշով: Չեկուցագրի ծանոթություններից մեկում, օրինակ, ասվում է. «Ընկ. Ավիսը, չնայած հանձնաժողովի բազմաթիվ դիմումներին, չէր տալիս իր ցուցմունքները: Նա դրանք հրապարակեց միայն ՀԿԿ կենտկոմի հունվարի 30-ի նիստում: ՀԿԿ կենտկոմի որոշմամբ նա պետք է հրապարակած ցուցմունքները հանձներ հանձնաժողովին, բայց հաջորդ օրը՝ հունվարի 31-ին, նա հրաժարվեց իր ցուցմունքներից, բավարարվելով միայն մի արտահայտությամբ՝ «Այդ բանաձևը հանդիսանում է առաջին հայկական կոնֆերանսի բանաձևը»<sup>42</sup>:

Վերջին անգամ ՀԿ(Բ)Կ կենտկոմի Նախագահությունը քննարկում ու վերջապետ է դնում բանաձևի շուրջը ծավալված չորսամսյա աղմկահարույց հարցին 1923 թ. փետրվարի 6-ին կայացած նիստում: Օրակարգ մտած հարցը ձևակերպված էր այսպես. «Ընկ. Ավիսի դեմ ուղղված ընկ. Ս. Կասյանի՝ «Նոր աշխարհ» ամսագրի N 2-ում առաջադրված մեղադրանքները քննող հանձնաժողովի զեկուցագիրը»<sup>43</sup>:

Հանձնաժողովի զեկուցագրում և նրանում ներառված եզրակացությունում ոչ մի խոսք չէր ասված Կասյանի իրավացի կամ անիրավացի լինելու մասին: Եզրակացությունում նշված էր. «Հանձնաժողովը մանրամասն ծանոթանալով գրավոր և բանավոր ցուցմունքներին, գտնում է, որ ընկ. Ավիսի բանաձևը կոնֆերանսի կողմից չէր ընդունվել, այլ փոխանցվել էր հատուկ հանձնաժողովին, որը չէր կարողացել հավաքվել: Հետևաբար, ընկ. Ավիսը իրավունք չուներ հրապարակել այն, որպես կոնֆերանսի բանաձև: Ինչ վերաբերում է «Անդրկովկասի

<sup>40</sup> Նույն տեղում:

<sup>41</sup> Նույն տեղում:

<sup>42</sup> Նույն տեղում, ց. 2, գ. 54, թ. 21:

<sup>43</sup> Նույն տեղում, թ. 7:

կոմունիստական կազմակերպություններին և Արևելքի աշխատավորներին դիմումին», ապա այդ դիմումի տեքստը չի հնչեցվել կոնֆերանսում, այդ իսկ պատճառով ընկ. Ավիսը նույնպես իրավունք չուներ այն հրապարակելու...»<sup>44</sup>:

ՀԿ(Բ)Կ կենտկոմի Նախագահությանն Գիտտի արձանագրությունում հանձնաժողովի զեկուցագրի քննարկման ոչ մի մանրամասն չի արտացոլված: Միանգամից տրված է ընդունված որոշումը. «Հանձնաժողովի զեկուցագիրը` «Известия ЦК КПА»-ին ուղարկված բանաձևի և այդ կապակցությամբ «Նոր աշխարհ»-ի N2-ում, հրապարակված ընկ. Կասյանի հոդվածի մասին, ընդունել ի գիտություն: Արձանագրել, որ բանաձևը չի ընդունվել Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների առաջին ընդհատակյա կոնֆերանսում: Միաժամանակ համարել անթույլատրելի ներկուսակցական մարտավարության հարցերի փոխադրումը բաց մամուլի էջեր այն կերպ, ինչ կերպ դա արվել է «Նոր աշխարհ»-ի N 2-ում ընկ. Կասյանի կողմից, որի համար նրան պարտավանք հայտարարել»<sup>45</sup>:

Սույն հոդվածում առաջին անգամ հրապարակվող փաստաթղթերը, մասնավորապես ՀԿ(Բ)Կ կենտկոմի Նախագահության որոշմամբ ստեղծված հանձնաժողովի զեկուցագիրը` եզրակացությամբ հանդերձ, և ՀԿ(Բ)Կ կենտկոմի Նախագահության 1923 թ. փետրվարի 6-ի վերոբերյալ որոշումը կարևորվում են մի քանի առումներով:

Այննից առաջ դրանք փաստագրում են, և սա գլխավորն է, որ Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների 1920 թ. հունվարյան ընդհատակյա կոնֆերանսը ոչ մի բանաձև չի ընդունել: Այն ընդունել է թեզիսներ` միանգամայն այլ բովանդակությամբ ու որակի, որոնք, ինչպես և կոնֆերանսի մյուս փաստաթղթերը, չեն պահպանվել: Հետևաբար, հայ ժողովրդի պատմության արդի ժամանակաշրջանի կարևորագույն հիմնախնդիրներից մեկին` Հայաստանում խորհրդային կարգերի հաստատմանն առնչվող և «պատմականի» համբավ ձեռք բերած բանաձևը, որը, ինչպես տեսանք ճանաչվել է անվավեր ՀԿ(Բ)Կ կենտկոմի Նախագահության 1923 թվականի փետրվարի 6-ի վերը նշված որոշմամբ, պետք է հանվի գիտական շրջանառությունից և համապատասխան շտկումներ կատարվի պատմագիտական գրականությունում ու դասագրքերում:

Երկրորդ. Հրապարակված փաստաթղթերը հավաստում են Հայկոմկուսի հիմնադիրներից և առաջատար դեմքերից մեկի` Ավիս Նուրիջանյանի կողմից Հայկոմկուսի պատմության գիտակցաբար խեղաթուրման փաստը դեռևս այդ կուսակցության ձևավորման արշալույսին:

**С. О. АМИРЯН - Об одном "историческом" документе.** - В статье, на основе впервые публикуемых документов, опровергается юридическая достоверность приобретшей историческую значимость "Резолюции", якобы принятой на первой подпольной конференции Коммунистических организаций Армении (Ереван, 1920).

Резолюция была опубликована одним из руководящих деятелей Компартии Армении Ависом Нуридджаняном в официальном информжурнале - "Известия ЦК КПА" (25 января 1922 г.). И несмотря на то, что принятие этой Резолюции указанной конференцией в свое время было опровергнуто Постановлением Президиума ЦК КП(б)А от 6-го февраля 1923 г., по сей день документ фигурирует во всех более или менее значительных трудах, освещающих период установления советской власти в Армении и издающихся как у нас, так и за рубежом.

Настало время восстановить историческую справедливость.

<sup>44</sup> Նույն տեղում, ց. 2, գ. 54, թ. 2-ի հավառակը:

<sup>45</sup> Նույն տեղում, ց. 3, գ. 7, թ. 7: